Արբիտրաժի
և հաշտարարության
հայաստանյան կենտրոն

ՊԱՐՏԱԴԻՐ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐՎԱ ԱՄՓՈՓԻՉ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2026 | Երևան

www.amca.am

Առաջին տարին

Վեճերի լուծման այլընտրանքային եղանակների զարգացումը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի կարևորագույն ձեռքբերումներից է: Այս համատեքստում, պարտադիր հաշտարարության ինստիտուտի ներդրումը նոր էջ բացեց ամուսնաընտանեկան վեճերի խաղաղ, փոխհամաձայնեցված հանգուցալուծման մշակույթի արմատավորման գործում: Այս փոփոխությունը ոչ միայն նպաստել է ՀՀ-ում հաշտարարության ինստիտուտի զարգացմանը, այլև մտածողության, իրավագիտակցության և հաղորդակցության նոր մշակույթի ձևավորման սկիզբ է հանդիսացել:

Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնը, որպես այս կարևորագույն բարեփոխման առանցքային և ինստիտուցիոնալ դերակատար, ի սկզբանե հանձն է առել երաշխավորել պարտադիր հաշտարարության արդյունավետությունը:

Այսօր մենք ամփոփում ենք պարտադիր հաշտարարության կիրառման առաջին տարին. մի ժամանակահատված, որը լի էր ինչպես նոր համակարգային լուծումների ներդրմամբ, այնպես էլ օբյեկտիվ մարտահրավերներով: 2025-2026 թվականների ընթացքում Կենտրոնը գրանցել և իրականացրել է 350-ից ավելի տեղական և միջազգային հաշտարարական գործեր, իրականացրել է իր հաշտարարների վերապատրաստման դասընթացներ, ոլորտի մշտադիտարկում, բացահայտել առկա խնդիրները և ներկայացրել դրանց հաղթահարմանն ուղղված առաջարկություններ:

Սույն հաշվետվությունը նպատակ ունի ի մի բերելու անցած մեկ տարվա վիճակագրական և վերլուծական տվյալները, ինչպես նաև գնահատելու հաշտությամբ ավարտված գործերի դինամիկան:

Վստահ ենք, որ պարտադիր հաշտարարության ինստիտուտի շարունակական զարգացումը աստիճանաբար կնպաստի քաղաքացիական վեճերի լուծման գործընթացում հաշտարարության առավել լայն կիրառմանը և կձևավորի վեճերի խաղաղ ու համագործակցային լուծման նոր մշակույթ անհատների, բիզնեսի և քաղաքացիական հարաբերությունների այլ սուբյեկտների շրջանում:

Լիլիթ Պետրոսյան

Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Իրազեկման միջոցառումներ,
- Հրապարակումներ,
- Վերապատրաստումներ և մասնագիտական քննարկումներ:

ՊԱՐՏԱԴԻՐ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

Հանրության իրազեկում | Հրապարակումներ

2025 թվականի հունվարի 10-ին՝ նախքան պարտադիր հաշտարարության ինստիտուտի ուժի մեջ մտնելը, Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի կողմից հրապարակվել է ընդարձակ հոդված, որով անդրադարձ է կատարվել պարտադիր հաշտարարության ինստիտուտին՝ ներկայացնելով դրա հասկացությունը, կիրառման դեպքերը, հաշտարարի նշանակման ընթացակարգը և փոխհատուցման կարգը:

Հոդվածը հասանելի է հետևյալ արագ արձագանքման (QR) հոդվածով



ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿԱՅԱՑՄԱՆԸ

Համագործակցություններ

Հայաստանի Հանրապետությունում ամուսնաընտանեկան գործերով պարտադիր հաշտարարության ինստիտուտի ներդրման նախապատրաստական աշխատանքների շրջանակում, 2025 թվականի փետրվարի 24-ին Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնը համագործակցության առաջարկ է ուղարկել Հայաստանի Հանրապետությունում գործող բոլոր արտոնագրված հաշտարարներին:

Համագործակցության առաջարկով հաշտարարներին ներկայացվել են Կենտրոնի գործունեության հիմնական ուղղությունները, պարտադիր հաշտարարության վարույթների կազմակերպման սկզբունքները:

Արդյունքում՝ շուրջ 1 տարի, Կենտրոնը *pro bono* հիմունքներով իրականացրել է աջակցություն իր ցանկում ընդգրկված և Կենտրոնի հետ համագործակցող հաշտարարներին՝ e-mediation հարթակից մակագրվող պարտադիր հաշտարարության գործերի շրջանակներում:

«ՀԱՐՑԵՐ և ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ ՊԱՐՏԱԴԻՐ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՁԵՌՆԱՐԿ

Իրազեկում | Հրապարակումներ

Հանրության և պարտադիր հաշտարարության մասնակիցների իրազեկվածության բարձրացման նպատակով մշակվել են հարցուպատասխանի ձևաչափով խորհրդատվական պարզաբանումներ:

Դրանք համակարգված և մատչելի կերպով ներկայացնում են պարտադիր հաշտարարության ինստիտուտի էությունը, հաշտարարության ենթակա վեճերի շրջանակը, վարույթի իրականացման կարգը, հաշտարարի իրավական կարգավիճակը և վարձատրության առանձնահատկությունները, ինչպես նաև գործընթացին առնչվող այլ գործնական հարցեր:

www. AMCA .am

Ձեռնարկն ամբողջությամբ հասանելի է Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի կայքում՝ www.amca.am:

Կարելի է ընթերցել հետևյալ հղումով



«ՊԱՐՏԱԴԻՐ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ»՝ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՇՏԱՐԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Իրազեկում | Հրապարակումներ

Պարտադիր հաշտարարության գործընթացի միասնական և արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի կողմից մշակվել և հաստատվել է «Պարտադիր հաշտարարության իրականացման ուղեցույցը»:

Ուղեցույցում համակարգված ներկայացված են հաշտարարության առաջին հանդիպման կազմակերպման և անցկացման հիմնական փուլերը՝ սկսած կողմերի նույնականացումից և գործընթացի ներկայացումից մինչև հաշտարարության ավարտի ձևակերպումը:

Արագ արձագանքման (QR) կոդի միջոցով կարող եք ծանոթանալ AMCA պարտադիր հաշտարարության իրականացման ուղեցույցին

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Մասնագիտական քննարկումներ / վերապատրաստումներ

հուլիսի 11, 2025 թվական

2025 թվականի հուլիսի 11-ին Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնում տեղի ունեցավ մասնագիտական քննարկում AMCA ցանկում ընդգրկված հաշտարարների հետ:

ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԵՐՐՈՐԴ ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՇԱԲԱԹՈՒՄ

Իրազեկում

2025 թվականի սեպտեմբերի 3-ից 5-ը Երրորդ ամենամյա հայկական արբիտրաժային շաբաթվա պանելային քննարկումներում ևս ներառված էր հաշտարարության թեման:

Պատկերը՝

Երրորդ ամենամյա հայկական միջազգային արբիտրաժային շաբաթվա հաշտարարության պանելից:

Պատկերում՝

Հաշտարարների մեկօրյա վերապատրաստման դասընթաց:

ՀԱՇՏԱՐԱՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ՝ SIDRA-Ի ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Մասնագիտական քննարկումներ / վերապատրաստումներ

Փետրվարի 3, 2026 թվական

SMU SINGAPORE MANAGEMENT UNIVERSITY

Singapore International Dispute Resolution Academy

Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնը՝ Սինգապուրի վեճերի լուծման միջազգային ակադեմիայի (SIDRA) հետ համագործակցությամբ իրականացրել է առցանց մասնագիտական վերապատրաստման դասընթաց: Դասընթացի շրջանակներում SIDRA-ի դասընթացավարներ Նադյա Ալեքսանդերը, Ալինե Բյանկինին, Մարիամ Գոցիրիձեն և Անջելինա Հինգին Կենտրոնի հաշտարարներին և քարտուղարության ներկայացուցիչներին ներկայացրեցին պարտադիր հաշտարարության վերաբերյալ գոյություն ունեցող առաջադեմ միջազգային փորձը՝ իրենց իրավասություններում:

Վերապատրաստման նպատակն էր զարգացնել հաշտարարների գործնական հմտությունները և ամրապնդել նրանց մասնագիտական կարողությունները՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով ընտանեկան հաշտարարության ոլորտում առաջացող էթիկական, ընթացակարգային և գործնական հարցերին:

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

- Պարտադիր հաշտարարության գործերի վիճակագրություն,
- Համաձայնությունների դինամիկա,
- Միջազգային բնույթի գործերի վիճակագրական առանձնահատկություններ:

ԱՐԲԻՏՐԱԺԻ ԵՎ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ԸՆԹԱՑԱԾ ՊԱՐՏԱԴԻՐ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐ

Գործը գրանցվում է Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնում, եթե՝

- Վեճի կողմը կամ կողմերը Կենտրոն են ներկայացրել հաշտարարություն իրականացնելու վերաբերյալ դիմում,
- Վեճի կողմը ներկայացրել է հաշտարարություն իրականացնելու վերաբերյալ հարցում, որի հիման վրա վեճի մյուս կողմը տվել է իր համաձայնությունը Կենտրոնի կանոնների հիման վրա հաշտարարության իրականացմանը,
- Կենտրոնի հաշտարարների ցանկում և ՀՀ ԱՆ-ի կողմից հատուկ էլեկտրոնային համակարգի միջոցով մակագրում ստացած հաշտարարը Կենտրոն է ներկայացնում պարտադիր հաշտարարության գործով քարտուղարություն իրականացնելու դիմում:



ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝

ԸՍՏ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԱՎԱՐՏՄԱՆ ՀԻՄՔԵՐԻ



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ



Օտարերկրյա տարրով ծանրաբեռնված իրավահարաբերություններից բխող պարտադիր հաշտարարության գործերով իրականացվել է քարտուղարության գործառույթներ հետևյալ լեզուներով՝

[hy] հայերեն
[ka] վրացերեն
[en] անգլերեն
[de] գերմաներեն
[ar] արաբերեն
[ru] ռուսերեն

ԹՎԱՅՆԱՑՈՒՄ

ԹՎԱՅՆԱՑՈՒՄ

- հաշտարարության գործերով քարտուղարության մի շարք գործիքների թվայնացում,
- e-AMCA գործերի կառավարման համակարգի հաշտարարության բլոկի գործարկում և ֆունկցիոնալ հնարավորությունների կատարելագործման քարտեզագրում:

ԹՎԱՅՆԱՑՎԱԾ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գործարկվել է e-AMCA գործերի կառավարման էլեկտրոնային համակարգի հաշտարարության բլոկը, որի նպատակն է թվայնացնել հաշտարարության գործերի շրջանակներում իրականացվող քարտուղարությունը և բարձրացնել գործընթացի արդյունավետությունը:

Նոր համակարգի ներդրմամբ թվայնացվել են քարտուղարության մի շարք հիմնական գործիքներ, ներառյալ՝ գործերի գրանցումը և բաշխումը, հաշտարարների նշանակման գործընթացը, փաստաթղթաշրջանառության իրականացումը, գործերի ընթացքի կառավարումը, ինչպես նաև վիճակագրական տվյալների ձևավորումն ու գեներացումը:

Հարթակը հնարավորություն է տալիս ապահովել հաշտարարության գործերի ամբողջական և կենտրոնացված կառավարում:

Համակարգի ճարտարապետության շրջանակներում արդեն իսկ քարտեզագրվել և նախագծվել են այն ֆունկցիոնալ հնարավորությունները, որոնք նախատեսվում է հետագա փուլերում հասանելի դարձնել հաշտարարներին և հաշտարարության կողմերին՝ ապահովելով գործերի առցանց կառավարման ամբողջականությունը, փաստաթղթերի փոխանակումը, գործընթացի վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը թվային հաղորդակցությունը մեկ միասնական հարթակի միջոցով:

ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼԻԼԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ
Գլխավոր քարտուղար և տնօրեն

ՄԱՆՈՒՇ ՍԱՂՅԱՆ
Ավագ իրավաբան

ՆՈՐԱՅՐ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Իրավաբան

ԱՐՍԵՆ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ
Կրտսեր իրավաբան

ՀԱԿՈԲ ՉՈԼԱՔՅԱՆ
Իրավաբան-փորձագետ

Արբիտրաժի
և հաշտարարության
հայաստանյան կենտրոն

ՊԱՐՏԱԴԻՐ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐՎԱ ԱՄՓՈՓԻՉ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ